

48. ՓԻՍԱՆ ՓԻՍԸ

Մին թաքավորը ունրան թաքավորութիւնեն կեսը տում ա վեզիրին։ Թաքավորը մին օր թաքուն տըեղա եշում ա, տըեսնում՝ վեզիրն ունրան անա մին վըեսկի կյուղացավ։ Մտածում ա, թա թաքավորութունս սրա նհետ հալալ կես ըմ ըրալ, էս մարթին էլ հինչն ա՞ ըստիրում, վըեր վըեսկուս մինը կյուղանում ա։ Վեզիրին ծեն ա տում կոշտը, ասում.—Քեզ տասնըհենգ օր ժամանակ ըմ տում, շոռ եք, քթի, ինձ ասե, թա հի՞նչն ա ըխշարքումս փիսանն փիսը։ Վըեր ըսեցեր վուշ, քեզ կախ ըմ տըլական։

Վեզիրը քյինում ա տասը օրումը սաղ երգյիրը շոռ կյում, շատ ըստունր-ընգունր հրցըփորց անում, ունրան դանրդն էլ ասում, վըեչ մինը կարում չի ճար անե։ Տասը օրան ետը կյում ա թաքավորին կոշտը, ասում.—Թաքավորն ապրած կենա, հիշքան շոռ նկե, մըտըծեցե, հրցըփորց ըրե, կըրեցե վուշ քթենում։ Թաքավորը թա՝ գյունդում չըմ, հենգյ օր ա մնացալ, յա քթի, յա քեզ կախ ըմ տըլական։ Վեզիրը նորից ա քյինում շոռ կյում, շատ խըելունք մարթուցն անա հըրցըփորց անում, նհետն էլ ունրան դանրդը ասում, վըեչ մինը կարում չի գյիդա։

Մին օր էլ մին լենչ տըեղավ քյինալիս եշում ա, տըեսնում մին չորան վըեխճարն առաչն ըրած, ըրըծըցընում ա։ Կոխկավն անց ա կենում, պարյոր չի տում։ Վըեր մխրն քյինում ա, չորանը ծեն ա տում, թա՝ ա՞ հըղըցավը քյինեղ, ես կուճուր խոխա

չըմ, ջանհիլ չըմ, մընծ, հլիվուր մարթ ըմ, կոխկավըս վըր անց կացեր, խե՞ պարյոր չի տուվեր։ Վեզիրը թա՝ լիհա դարդըս տու վըս, վըր կաս։ Ջորանն ասում ա.—Դարդըտ ասե, բանի կարեմ քյանանգյ անեմ։ Վեզիրը թա՝ էսքան իմաստուն, խըելունք մարթու կոշտ ըմ քյեցալ, կրեցալ չըն քյանանգյ անեն, տու պիտի՞ կարես։ Ջուրանը թա՝ հինչ կա՞, վըր ասես, բանի կարեմ։ Վերչը, տա ասում ա՝ պա ես էհինչ թաքավըրեն վեզիրն ըմ. թաքավըրեն ուրան երգյիրին կեսն ինձ ա տուվալ. մին օրն ուրան անա մին վըսակե յըմ կյուղացալ, ինձ տասնըհենգյ օր ժամանակ ա տուվալ, ասալ ա քյինա շոռ յեք, մըտածե, քթի, նք ինձ ասե, թա հի՞նչն ա ըխշարքումըս փիսան փիսը։ Էս ա տասնըհենգյ օր ա, շոռ ըմ կյամ, ըստուր-ընգուր հրցըփորց անում, կարում չըմ քըթենեմ։ Ջուրանը թա՝ էն ա հղըցեն էն ղրաղեն փսոր կա, քյինա լոխ կեր, էսքան վրեխճարն էլ ըմ տամ քեզ, էտ հարցեն պատասխանն էլ ասեմ։ Վեզիրը եշում ա, տրեսնում շորս ընգյունին մարթ չի կա, շուրանեն ասածն անում ա, վրեխճարը լոխ յոր օնում, ետնան էլ թա՝ դե ասե, տրեսնամ հի՞նչն ա ըխշարքումըս փիսան փիսը։ Ջորանը թա՝ թամահն ա։

Վեզիրը քյինամ ա թաքավըրեն կոշտը, ասում.—Թաքավըրը ապրած կենա, քթալ ըմ։ Թաքավըրը թա՝ դե ասե տրեսնամ ըխշարքումըս հի՞նչն ա փիսան փիսը։ Վեզիրն ասում ա՝ թամահն ա։ Թաքավըրը թա՝ ասե տրեսնամ՝ քեզ հու վա էտ պեն ասալ։ Վեզիրը թա՝ էհինչ սարեն շորանը։ Թաքավըրը մարթիկյ ա դարկում, էտ շուրանեն պիրիլ տամ կոշտը, թաքավըրությունեն կեսը տամ տրան, վեզիրին էլ կես տամ։